

Բարեխնամ Առաջնորդ Յովնան Ս. Արք. Տերտերեան, Արժանապատի Տ. Շնորհք Ա. Քինյ. Տէմիրճեան, սիրելի բրշ. սարկաւազներ եւ դպիրներ եւ յարգելի ներկաներ:

Սա պահուստ կ'ուզեմ յայտնել իմ եւ կողակիցս Նիլտաին անբացատրելի ուրախութիւնը:

Ուրախ ենք որովհետեւ մեր շատ շատ սիրելի ընկեր Բրշ. Միհրան Սրկ. Շահպազեան, բարեխօսութեամբ Յովնան Սրբազան Տօր, Ամէնահայոց Կաթողիկոս Գարեգին 2 ընդ ի կողմէ պարգեւատրուեցաւ Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանով ու Սրբատառ Կոնթակով:

Թուականը 1956 էր, այսինքն 67 տարիներ առաջ, երբ եւս II տարեկան էի իբրեւ եկեղեցոյ դպիր, անդամ էի, լուսահոգի ղեկավար Պր. Վարդգէս Գաբրիէլեանի կողմէ, Պոլիս Ս. Յովհաննէս Նայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ մէջ, հիմնուած 100 մանկանց անուն երգչախումբի: Իսկ 3 տարիներ յետոյ Պր. Գաբրիէլեան երկրորդ անգամ հիմնեց 100 Մանկանց երգչախումբ մը եւս ապահովելու համար նոր երախաներու մասնակցութիւնը: 100 մանկանց կըսեմ իրականութեան մէջ գրեթէ 250 երախաներէ կազմուած երգչախումբ մըն էր եւ տարուայ ընթացքին 3 կամ 4 անգամներ զանազան եկեղեցիներ այցելելով կ'երգէինք Եկմալեան Եղանակով Նոգեպարար Սուրբ Պատարագը խանդավառելով հաւատացեալ ներկայ ժողովուրդը:

Ահաւասիկ մեր սիրելի Բրշ. Միհրան Սրկ. Շահպազեանն ալ մաս կը կազմէր սոյն երգչախումբին:

Ան սիրահարն էր եկեղեցոյ, իբրեւ Սուրբ Խորանի ծառայ:

Երբ 16 տարեկան էի նոյն 100 մանկանց երգչախումբին մէջ ծանօթացայ իրեն :

Ինձի համար ամենայատկանշական այն պահն էր երբ Միհրանը Առաւօտեան եւ Սուրբ Պատարագի երգեգողութեանց իր այլ դպիր ընկերոջ հետ միատեղ Խորանին առջեւ առանց տմտմալու եւ սահուն կ'ընթերձէին սաղմոսները, հիանալով կը նայէի իրենց եւ միտքէս կ'անձնէի թէ այս երկու երախաները պիտի շարունակեն ծառայել Նայաստանայց եկեղեցոյ նուիրեալ պարտականութիւնը:

Գիտեք թե ով էր Միհրանին այդ ընկերը որ միասին մեծցած, միասին հասակ նետած եւ միասին մասնակցած են նոյն 100 մանկանց երգչախումբին:

Այդ մէկը գիտեք ով էր ուրկէ պիտի գիտնաք թե ով էր:

Այդ մէկը բոլորին սիրելի նախկին Արեւելեան Թեմի Առաջնորդ Գրշ. Խաժակ Ս. Արք. Պարսամեանն էր:

Միհրանը հաճոյք կ'առնէր իր բերած Աստուծոյ ծառայութենէն կարծես եկեղեցին ըլլար իր սեփական տունը, կարծես ան ըլլար եկեղեցոյ լուսարարն ու ժամկոչը: Չեմ լսած կամ տեսած որ Միհրանը բացակայ ըլլար Սուրբ Պատարագներէ:

Միհրանը համեստ է եւ մարդամօտ, իր համեստութիւնը ցուցաբերած է երգելու առիթ տալով այն երիտասարդներուն որոնք այսօր շնորհիւ Միհրանի կը ծառայեն խորանի վրայ պայծառացնելով Ս. Պետրոս Տայաստանեայց Առաքելական եկեղեցին:

Տոս ընտանիքիս անունով կ'ուզեմ շնորհատրել եւ իմ գնահատանքը փոխանցել Միհրանին կողակիցը սիրելի Զարթուիհին որ տարիներ կրնակ կեցած եւ գորաւիզ կանգնած է իր ամուսնոյն եկեղեցիէն ներս բերած Աստուածահաճոյ ծառայութեանը համար:

Սիրելի Միհրան դուն արժանի ես այս սուրբ Շքանշանին եւ Սրբատառ Կոնթակին: Վարձքդ կատար:

Ըպտանիքիս անունով կը մաղթեմ քեզի առողջ եւ երկար կեանք: Աղօթող ենք քեզի համար:

II Նոյեմբեր 2023 Կիրակի